ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Քննադատական մտածողություն և արժեհամակարգ

5-րդ դաս.

Կատարող՝ Սոնյա Հակոբյան

Դպրոց՝ Մ. Սարյանի անվ. թիվ 86 հիմն. դպ.

Առարկա՝ հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ Լեոյի անվ. հ. 65 ավագ դպրոց

Պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ I

1. ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ԸՆԿԱՎ

2. ՄԵՐ ԷԵԶՈՒՆ

3. ԵՐԳ ՈՒ ՏԱՂ

Գլուխ II

1. ԱՄՓՈՓԻՉ ԽԱՂ-ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջաբան

Ներածություն

Առաջնորդվելով Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներով՝ <<Մայրենի>>, <<Հայոց լեզու և գրականություն>> առարկաների ուսուցման և ուսումնառության համար սահմանված են հիմնական հասկացություններ՝ իրենց ենթահասկացություններով, որոնց մեջ իբրև պարտադիր պայման նշվում է ինքնությունը, այսինքն՝ վերաբերմունքն ու արժևորումը՝ տարիքային համապատասխան պահանջներով և նպատակներով: Վերաբերմունքի ցանկացած դրսևորում ենթադրում է նյութի պարզ ու հասկանալի ըմբռնում, համադրում, վերլուծում և քննադատական մտքի առկայություն:

Մտածողությունների, դիրքորոշումների, արժեքների հարափոփոխ ժամանակներում պարզապես դարի հրամայականն է առողջ, բարեկիրթ, խելացի ու նպատակասլաց անհատ/ սերունդ/ կրթելու և դաստիարակելու պահանջը, անհատ, որը պետք է օժտված լինի իրեն, շրջապատը, աշխարհը ճանաչելու, վերլուծելու, քննադատելու և արժևորելու կարողություններով ու հտություններով, ինքնաճանաչողությամբ, ինքնագնահատմամբ և ինքնաարժևորմամբ էլ ճանաչի ու սիրի իր հայրենիքը, կարևորի իրեն հասած ժառանգությունը և պատասխանատվություն կրի հետագա գործողությունների նկատմամբ:

Այսօր նման հմտությունների և կարողությունների զարգացմանը նպաստում է համագործակցային ուսուցումը,որի շնորհիվ աշակերտները սովորում են քննարկել սեփական վարքը, վեր հանել թույլ և ուժեղ կողմերը, պլանավորել հետագա անելիքները: Իհարկե, զարգացման այս մակարդակը բարդ ու ժամանակ պահանջող գործընթացը է, որի ծիլերը դրվում են տարրական դասարաններում, իսկ ձևավորումն ու զարգացումը իրականացվում է միջին և ավագ դասարաններում: Կարևոր պայման են տարիքային մտածողությանն համապատասխան ընտրված թեմաները, ներկայացված օրինակները, որոնք հնարավորություն են տալիս ինքնուրույն կարծիքներ արտահայտելու, խմբային աշխատանքներ կազմակեպելու: Յուրաքանչյուր անգամ սեփական միտք կամ կարծիք արտահայտելը ինքնավստահություն ձեռք բերելու,ինքնարժևորվելու լավագույն միջոց է:

Գլուխ I

1. «Երկնքից երեք խնձոր ընկավ»

Հեքիաթներ

Սույն աշխատանքը նպատակը է հետապնդում ներկայացնել հանրակրթության հիմնական դպրոցի միջին օղակի (5-րդ դասարան) սովորողների քննադատական մտածողության զարգացման նախապայմանները՝ ըստ ծրագրային թեմաների, և արժեհամակարգի ձևավորումն՝ իբրև վերլուծական - քննադատական մտածողության անհրաժեշտ ու անխուսափելի շարունակություն:

Զարգացնելով համապատասխան կարողություններ և հմտություններ՝ սովորողը կատարում է տեքստի (արձակ թե չափածո) կերպարների, գործողությունների բնութագրում, վերլուծություն, արտահայտում վերաբերմունք: Վճռորոշ դեր ունի դասի սկզբում ուսուցանվող նյութի, նպատակի, վերջնարդյունքի հստակեցումը, հարցերի ձևակերպումն ու կազմակերպումը: Հարցերը կարող են լինել ուղղորդող կամ խթանող, բացահայտումներ պարունակող, կարծիքներ ձևավորող: Աշակերտը իր յուրացրած գիտելիքներից ձևավորում է սկզբունքներ, հասկացություններ իր կյանքում կիրառելու համար, և այն ամենը, ինչ կարևորվում է նրա կողմից, դառնում է արժեք: Քննադատական մտածողության և արժեհամակարգի ձևավորման համար կարևոր և հարմար տարբերակ են թեմատիկ առումով հեքիաթները, որոնք ունեն ճանաչողական և դաստիարակչական նշանակություն:

<<Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը>> հեքիաթի բուն ասելիքը լավ յուրացնելու համար սովորողը ուսուցչի ուղղորդմամբ ճիշտ համեմատություններ իրականացնելով՝ բնութագրում է կերպարներն, ընդգծում տարբերություններն ու նմանությունները, բացահայտվում են նաև հերոսների դրական և բացասական կողմերը (հարմար է կիրառել Տ-ձև աղյուսակի մեթոդը): Այնուհետև իրականացնելով հեքիաթի բովանդակության քննարկում՝ վերլուծում են հերոսների գործողությունները, քննարկում մարդկային, ընկերական փոխհարաբերությունները: Առհասարակ վերլուծությունը հետաքրքիր ու նպատակային է լինում, երբ այն իրականացվում է համագործակցային աշխատանքներում, քանի որ նյութը ուսումնասիրվում, դիտարկվում է տարբեր մակարդակների, ըմբռնումների, պատկերացումների ֆոնի վրա: Խմբում հնչած ինչ-որ մի միտք,

նախադասություն կամ կարծիք մյուսների համար նոր մտքի, տեսակետի լուսարձակում կարող է լինել: Բացի դրանից, փորձը ցույց է տալիս, որ ինչքան աշակերտները շատ են խոսում, այնքան լավ են յուրացնում նյութը, հասկանում, վերլուծում: Համագործակցային աշխատանքներում ձևավորվում է նաև կոնկրետ վերաբերմունք հերոսների (եղբայրների) նկատմամբ, կարևորվում են ճմարտություններ, մի շարք իրողություններ, որոնք էլ սովորողի համար դառնում են արժեք: Ըստ հեքիաթի՝ եղբայրներից մեծը չար է, անգութ, նախանձ, փոքրը բարի է, համբերատար, աշխատասեր: Նա հարստություն ձեռք բերելով՝ չի մեծամտանում և նախկին կյանքին չի վերադառնում, այլ փորձում է բարի գործեր անել, օգնել մարդկանց: Չէ՞ որ նա ապրել էր աղքատության մեջ, եղել էր տնից, ինչքից զրկված, կրել էր դժվարություններ կյանքում: Դրա համար էլ նա կառուցում է տներ իր նման անտուն մարդկանց համար, այսինքն՝ նա կռահել էր, որ հարստությունը անցողիկ, անհաստատ ու դատարկ բան է, եթե ոչ մի լավ բանի չի ծառայում: Մեծ եղբայրը իր ագահության ու նախանձության պատճառով պատժվում է ՝ ընկնելով իր իսկ նյութած թակարդի մեջ: Քննադատելով մեծ եղբոր վարքը՝ սովորողները որպես օրինակ ընդունում են փոքր եղբոր գործունեությունը: Կարող են զուգահեռներ տանել աստվածաշնչյան համապատասխան պատվիրանների հետ:

Գրեթե նույն տրամաբանությունն է իշխում **«Հարուստն ու մուրացկանը»** հեքիաթում: Այստեղ ևս հարուստ-աղքատ համեմատականով քննարկվում, վերլուծվում են հերոսների վարքային առանձնահատկությունները, մարդկային որակները: Դիտարկումները հանգեցնում են այն եզրակացության, որ կյանքում բարի է ու գեղեցիկ, երբ մարդն իր ունեցածը կիսում է կամ ինչ-որ բաժին է հատկացնում կարիքավորին: Մի հատկանիշ, որից զուրկ էր մուրացկանը, քանի որ նա իրականում աղքատ է հոգով, մտածելակերպով: Երկու հերոսներն էլ՝ և՛ հարուստը, և՛ մուրացկանը, ունեն հարստություն, բայց մեկի հարստությունից բարիք է ծնվում, մյուսի հարստությունը անպտուղ, անիմաստ, դատարկ գոյություն է: Մի բան, եթե հասարակության համար օգուտ չի տալիս, պիտանի չէ, ուրեմն զուրկ է կարևորությունից: Քննադատելով ագահությունը, գովաբանելով բարությունն ու գթառատությունը՝ սովորողը եզրակացնում է, որ բարիք ստեղծելը, ուրիշին օգնելն ու ձեռք մեկնելը մարդու ամենակարևոր ձեռքբերումներից մեկն է:

Վերևում քննարկված գաղափարի մեկ այլ դրսևորումն է **«Արդուկն ու մարդուկը»** հեքիաթը: Հեքիաթն աստիճանաբար վերլուծելով ՝ սովորողն գալիս է այն եզրակացության, որ Մարդուկին չարիք ստեղծելու

հնարավորություն տալիս է հենց վախկոտ, տգետ, խղճուկ հասարակությունը: Վախը ծնում է չարիք, բայց ի տարբերություն մարդուն, բնությունը վախ չունի և չի ներում իր հանդեպ ոտնձգություն անողներին: Այս հեքիաթում բնությունը պատժում է Մարդուկին չարիքի՝ իր իսկ գործիքով՝ արդուկով: Բնութագրելով Մարդուկի կերպարը, վերլուծելով նրա գործողությունները, քննադատելով մարդկային ամբարտավանությունը՝ սովորողը ժխտում է մարդկանց այն տիպը, որոնք իրենց հաջողությունները վատ նպատակների համար են ծառայեցնում, քննադատվում է նաև տգետ հասարակությունը , որն արդեն փորձանք ու վտանգավոր է և՛ իր, և՛ շրջապատի նկատմամբ: Գործողությունների կոնկրետ մեկնաբանությունը, գնահատումը հնարավորություն է ընձեռում նաև բացահայտելու հեքիաթի սիմվոլները, ենթատեքստում արտահայտված մտքերը: Մանրամասն վերլուծությունների արդյունքում սովորողը գալիս է այն եզրակացության, որ արդուկը գիտելիքն է, գիտությունը, որը պետք է օգտագործել բարիք ստեղծելու, մարդկանց հոգսերը թեթևացնելու, պիտանի բան արարելու համար: Հեքիաթի ենթատեքստում արտահայտված մտքերից մեկն էլ մարդու՝ բնության նկատմամբ վատ վերաբերմունքն է: Մարդուկի օրինակը հիշեցնում է , որ չի կարելի անփույթ, անխիղճ, անհեռատես վերաբերմունք դրսևորել բուսական և կենդանակ աշխարհների նկատմամբ, ուստի հենց բնության կողմից էլ արժանի պատժի է արժանանում :

Գաղափարական աղերսներով առանձնանում են **«Գարունածաղիկ», «Թռիչք», «Սոխակը»** հեքիաթները: Հարմար է նախքան նոր նյութին ծանոթանալը ուսուցումը սկսել զրույց - քննարկումով՝ հնարավորություն տալով սովորողներին խոսելու իրենց երազանքների, նպատակների մասին: Այս զրույցը կմեծացնի նրանց հետաքրքրությունը ներկայացվելիք նյութի նկատմամբ: Հեքիաթների հերոսները տարբերվում են շրջապատից. համարձակ են, երազկոտ, պրպտուն մտքով, չեն ընկրկում դժվարություններից, քննադատություններից, նպատակասլաց են, ունեն սուր աչք, տեսնում ու զգում են գեղեցիկը, ապրում են միայն նրան հասնելու հույսով, ձգտում են հասնել ինքնաճանաչողության, ինքնաարժևորման: Հատվածաբար ընթերցելով՝ սովորողները կկռահեն հերոսների երազանքները, կմեկնաբանեն նրանց գործողությունները, կգնահատեն՝ ըստ իրենց պատկերացումների: Անհրաժեշտ է բերել նմանատիվ օրինակներ, երբ շատ հայտնի մտածողներ, բանաստեղծներ, քանդակագործներ, նկարիչներ իրենց՝ ստանդարտից դուրս մտքերի, գաղափարների, գծագրերի և այլ

պատկերացումների համար հալածվել են , քանի որ չեն հասկացվել հասարակության կողմից,այսինքն՝ հասարակությունը պատրաստ չի եղել հասկանալու, ընդունելու նրանց, չի ունեցել համապատասխան մակարդակ: Բայց, այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց այդ անհատները մեծարվել բարձր են գնահատվել հասարակության կողմից:

«Սոխակը» հեքիաթի ուսուցումն էլ կարելի է կազմակերպել համակցված՝ կիրառելով երաժշտություն, գրականություն, արվեստի պատմություն: Հարմար տարբերակ է նաև «Շրջված դասարան» մեթոդի օգտագործումը: Սովորողները ինքնուրույն կամ համագործակցային ձևով կտեղեկանան նյութին, նրան համակցված թեմաներից կպատրաստեն զեկուցումներ: Ուսուցիչը բնականաբար, կուղղորդի նրանց տեղեկատվության ձեռքբերման, ինչպես նաև զեկուցումներ պատրաստելու աշխատանքներում (չեն բացառվում նաև կենդանի երաժշտություն, ասմունք, պար):Խոսել նաև երգի բուժիչ դերի մասին (ֆլորոթերապիա), ներկայացնել հանրահայտ երգահանների, գրականագետների համանման աշխատանքները: Այնուհետև ծանոթանալով հեքիաթին, վերլուծելով գործողությունները, քննադատելով, արժևորելով՝ սովորողները գալիս են այն եզրակացության , որ իսկական արվեստը՝ այս դեպքում երգը, վեր է ամեն ինչից, այն մաքուր է, անմիջական, առանց ձևականությունների, դրա համար էլ դիպչում է մարդկանց սրտերին, խոսում նրանց հետ, հուզում: Մաքուր ու բնական ելևէջներով բնության մեջ հնչող երգը դառնում է բուժիչ, քանի որ թեթևացնում է մարդկանց հոգսերը, կյանքը դարձնում է ավելի քաղցր ու գեղեցիկ: Հեքիաթի վերլուծություններից սովորողները եզրակացնում են, որ իսկական արվեստը զգում են միայն նրանք, որոնք հոգով մաքուր են ու ազնիվ, այն ատում է բռնությունը, չի սիրում կեղծիքը , այլ սիրում է թևածել ազատության մեջ:

Ուսուցողական, ճանաչողական, արդիական նշանակություն ունի **<<Այգեպան Մոսին>>** հեքիաթը: Հեքիաթի ուսուցումը կարելի է կազմակերպել համագործակցային աշխատանքով: Դասարանը բաժանել խմբերի (4-5), հանձնարարել լուռ ընթերցել, հետո խմբում ցածրաձայն վերարտադրել (հիմնականում այն աշակերտների համար, որոնք դանդաղ են ընթերցում), որոշ գրառումներ անել թղթի վրա ՝ հեքիաթից դուրս բերելով կարևոր մտքեր, արտահայտություններ, բանալի բառեր: Այնուհետև կազմակերպել դասարանական քննարկում: Անցկացվում է զրույց տեքստի

բովանդակության շուրջ՝ վերլուծություններ, եզրահանգումներ կատարելու նպատակով (խմբային աշխատանքի հետագա ընթացքը տես ՝ Գլուխ 2-րդ-ում): Սովորողների ստեղծագործական, երևակայական միտքը զարգացնելու նպատակով ուսուցիչը բացատրում է նաև հեքիաթում տեղ գտած սիմվոլների մասին և միաժամանակ գրանցում աշակերտների մեկնաբանությունները: Շատ կարևոր է ուսուցչի ուղղորդումը բացահայտումներ անելիս: Ըստ հեքիաթի վերլուծության ՝ Մոսին հավաքական կերպար է, ինքը ժողովուրդն է՝ իր արդար քրտինքով աշխատող, աշխատանքն իբրև բարձրագույն արժեք գիտակցող: Անհրաժեշտ եզրահանգումներին նպաստում է նաև Մոսի-թագավոր համեմատականը, իսկ Մոսի և կաղնի փոխակերպումով վերահաստատվում է ժողովրդի աննկուն կամքը, դժվարություններն հաղթահարելու մեծ ուժը, վերահաստատվում է նաև հողի ու ժողովրդի անքակտելի կապը: Միանշանակ քննադատվում է թագավորի՝ ի դեմս իշխող խավի, դաժանությունը, ժողովրդին զրկելու , նվաստացնելու, սեփական շահերով առաջնորդվելու դրսևորումները: Ժողովրդի նկատմամբ այս դիրքորոշումը, բնականաբար, ծնում է հակադարձ վերաբերմունք. ի հայտ է գալիս բահերի՝ ժողովուրդ - անտառ տեսիլքը: Ուսուցչի ուղղորդմամբ սովորողները փորձում են ընբռնել, մեկնաբանել այս և մյուս պատկերների ենթատեքստը: Ըստ որի՝ ժողովուրդը, մի բռունցք դարձած, ինքն է պատժում չարին, իրեն հողից զրկողին, նվաստացնողին, իր իրավունքները ոտնահարողին:

Պարտեզի վերածված անապատի պատկերը ժողովրդի երազած կյանքն է, ուր չկան բռնակալներ, հրամաններ, և նա՝ ժողովուրդը, գոհ է ու երջանիկ: Սովորողները **T- ձև աղյուսակով** մանրամասնում , համեմատում և իրար հակադրում են թագավորով ու հրամաններով կյանքն ու ժողովրդի երազած կյանքը: Քննադատվում է առաջինը՝ տեղը զիջելով երկրորդ տարբերակին, ուր իշխում են բարությունը, աշխատասիրությունը, հոգատարությունը, ազնվությունն ու սերը: Սովորողներն կարևորում են նաև այն հանգամանքը, որ այս հեքիաթի հասարակ ժողովուրդը տգետ ու միամիտ չէ, շատ լավ գիտակցում է իր առավելությունը, իրավունքները, իր արժեքն ու միասնականության գինը: Այս առումով «Այգեպան Մոսին» հեքիաթը ակնհայտորեն արդիական՝ է, ինչը թույլ է տալիս սովորողնորին համեմատել արդի իրականության հետ, անել ընդհանրացումներ ու եզրահանգումներ (թագավորի կերպարի ենթատեքստում կարելի է ենթադրել նաև արտաքին թշնամու, հողի ու ժողովրդի խնդիրը):

Բարության, գթառատության, մարդասիրության յուրահատուկ դրսևորում է ***«Խոսող ձուկը»*** հեքիաթը: Այս հեքիաթն ևս կարելի է համագործակցային ուսուցմամբ մատուցել: Դասի սկզբում հարմար է կիրառել «Գլուխ գլխի» մեթոդը, որն օգնում է սովորողին տեղեկությունը համատեղ մշակելու, հարցեր լսելու, կազմելու, պատասխաններ մտածելու խմբում ճիշտ դրսևորվելու հմտություններ զարգացնել ու կիրառել: Նախքան նոր նյութը ներկայացնելը ուսուցիչը խմբերին ներկայացնում է ընկերության, փոխօգնության, բարության վերաբերյալ նախօրոք ձևակերպված հարցեր: Խմբերը պատրաստում են սպառիչ, հիմնավորված պատասխաններ: Հնչած կարծիքների, պատասխանների հետ համաձայն չլինելու դեպքում մյուս խմբերը քաղաքավարի բանավիճում են, փորձում են հակառակը համոզել: Համագործակցային նման աշխատանքները օգնում են սովորողների մոտ ձևավորել միմյանց հարգելու, կարծիքները լսելու, բարեկիրթ բանավիճելու կարողություններ, հմտություններ: Այս հեքիաթի հիմքում անշահախնդրորեն և խղճի թելադրանքով արված լավությունն է, որը հատուցվում է անհրաժեշտ պահին: Բարի գործն այն է, երբ պատասխան քայլեր չի ակնկալում, երբ չի զղջում արված լավության համար, հաշվենկատ և գծուծ չէ: Հեքիաթում քննադատվում է շահամոլությունը, անխղճությունը, ուրիշի ցավին ու տխրության նկատմամբ անտարբերությունը, բայց սովորողի վերաբերմունքը միանգամից փոխվում է , երբ բնութագրում է ձկնորսի շալակատարին՝ բարեսիրտ, գթառատ, հոգատար: Համագործակցային աշխատանքին հաջորդիվ սովորողները ուսուցչի հանձնարարությամբ կնկարեն իրենց կարծիքով ստեղծագործության ամենակարևոր, ելակետային դրվագը: Բացի դրանից, ստեղծագործական կարողություններ զարգացնելու նպատակով ուսուցիչն առաջարկում է սովորողներին փոխել դեպքերի ընթացքը և հեքիաթն ավարտել այլ իրադարձություններով՝ չհեռանալով հեքիաթի բուն գաղափարից: Այս դեպքում ևս նրանք քննադատական դիրքորոշում են ցուցաբերում մարդկայնորեն մերժելի արարքների նկատմամբ ՝ արժևորելով բարությունը, մարդասիրությունը:

Մարդասիրության, գթառատության, սեփական անձն ուրիշից վեր չդասելու, հոգու գեղեցկությունն ավելի կարևորելու տեսանկյունից դաստիարակչական նշանակությամբ անկրկնելի օրինակներ են **«Աստղամանուկը», «Կախարդված տղան»** հեքիաթները: Աստիճանական վերլուծությունների ու մեկնաբանությունների արդյունքում սովորողները փորձում են հիմնավորել հերոսներին բաժին ընկած պատիժները՝ արդարացնելով կամ

քննադատելով նրանց նախկին արարքները: Այս դեպքում ևս քննադատությունն ու վերաբերմունքը նպատակային դարձնելու միտումով ուսուցիչը կարող է հեքիաթների լիարժեք յուրացման համար ընտրել համագործակցային ուսուցումը՝ կիրառելով խմբային աշխատանքներ: Խմբերին հանձնարարվում է ինքնուրույն ծանոթանալ նյութին, ձևակերպել հարցեր: Խմբերի ձևակերպված հարցերի շուրջ էլ ծավալվում է դասարանական քննարկում: Անշուշտ, ուսուցիչը շարունակ հետևում է նրանց աշխատանքներին, ուղղորդում հարցերի ընտրության մեջ: Քննարկումների արդյունքում էլ սովորողները հասկանում են , որ հերոսները կատարել են աններելի արարքներ, դաժանորեն չարչարել, ոչնչացրել են բնության անմեղ արարածներին, դրա համար էլ արդարացիորեն պատժվում են ինչպես մարդկային, այնպես էլ բնության օրենքներով և պարտադիր անցնում մաքրագործման ճանապարհ: Հետաքրքիր կլինի, եթե կիրառվի *«Դատավարություն» մեթոդը*՝ հնարավորություն տալով «Բնությանը» մտածելու էլ ավելի արդյունավետ պատժամիջոցներ բնության նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերողների համար: Կարող են ձևավորվել նաև խմբեր, որոնք կփորձեն պատճառաբանել հերոսների արարքները, կամ գտնեն «մեղմացուցիչ հանգամանքներ»: Բոլոր դեպքերում , քննադատության արդյունքում իբրև լավագույն արժեքներ ընդգծվում են մարդասիրությունը, բնապաշտությունը, հոգու գեղեցկությունը, բնության հետ ներդաշնակությունը:

Այդպիսով, ընտրված թեմայի շրջանակներում ուսումնասիրված հեքիաթների ուսուցման ավարտին անհրաժեշտ է իրականացնել թեմայի ընդհանուր ամփոփում՝ ձեռք բերված գիտելիքները դասակարգելու, սովորողների ստեղծագործական միտքն ու երևակայությունը խթանելու, քննադատական մտածողություն զարգացնելու, կայուն արժեհամակարգ ձևավորելու համար : Այս նպատակով կազմակերպվում են մի քանի վարժություններ (Գլուխ 2):

«Մեր լեզուն»

Հայտնի է, որ սեփական կենսափորձով, ինքնուրույն տեսակետներով ու գնահատականներով պայմանավորված անհատի արժեհամակարգը հիմնականում անհատական կողմնորոշում ունի: Կան արժեքներ, սակայն, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ և ընկալվում, գիտակցվում են անվերապահորեն, քանի որ ազգապահպանման, ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչողության տեսանկյունից չափազանց

կարևոր դեր ու նշանակություն ունեն: Իհարկե, ժամանակների հոլովույթում մի շարք արժեքներ վերաձևակերպվում են արդի պահանջներին համապատասխան, այնուամենայնիվ, այս կամ այն չափով պահպանում են իրենց կենսունակությունն ու գործունեությունը:

Սերնդեսերունդ փոխանցված և պետականորեն ամրագրված արժեքների նկատմամբ, ըստ Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների, աշակերտները դրսևորում են գիտակցված վերաբերմունք՝ կրելով պատասխանատվություն դրանց պահպանման և անաղարտ փոխանցման համար:

Իբրև ազգային, մնայուն ու անփոխարինելի արժեքներ են ընդունվում մայրենի լեզուն, հայրենիքը, հայ մշակույթը (հոգևոր և նյութական) արվեստը և այլն:

Հանրակրթության միջին օղակի՝ կոնկրետ 5-րդ դասարանի, «Մայրենի» առարկայի ուսուցման գործընթացը սկսվում է մայրենի լեզվի՝ իբրև ազգապահպանման, ինքնաճանաչողության, ինքնակենսագործունեության կարևոր արժեքի ուսուցմամբ:

Ընտրված ստեղծագործությունների՝ Ս. Կապուտիկյան, «Խոսք իմ որդուն», Ն. Զարյան, « Հայոց լեզուն» ուսուցմամբ սովորողը գալիս է այն եզրահանգման, որ, իրոք, մեր մայրենի լեզուն , ծնվելով Հայկ Նահապետի սերունդների բերանում, անցնելով բազում դժվարությունների, վերելքների ու վայրէջքների ճանապարհով, առ այսօր կենդանի է ու գործուն, այն հյութեղ է , ճկուն ու անգերազանցելի իր բոլոր դրսևորումներով, շերտերով, պատմության քառուղիներում միշտ փարոսի դեր է կատարել, ապրեցրել ու ապրեցնում է իրեն կրող ժողովրդին, հային և իր գոյությամբ, կենդանությամբ էլ պայմանավորում նրա լինելիությունը և հակառակը: Մայրենի լեզուն գիտակցվում է իբրև ազգային հարստություն, դարերով մեզ ժառանգված մեծագույն արժեք: Նման վերաբերմունքով է առանձնացվում, մեծարվում ու սրբացվում հայոց այբուբենը (Գ. Էմին, «Մեր այբուբենը»): Այն յուրաքանչյուր հայի կյանքում լույս է, ջահ է, բազում անհայտ դռների ոսկյա բանալին է, այն մեր փառավոր ու դժվարին անցյալն է , մեր ներկան ու պայծառ ապագան է :

Սովորողը անգիր սովորելով վերոհիշյալ բանաստեղծությունները՝ նրանց ամեն մի բառում, տողատակերում, փոխաբերական կամ ուղիղ իմաստով արտահայտված արտահայտություններում տեսնում է հայ ժողովրդի

պատմությունը, նրա անցած ճանապարհը, նրա կենցաղն ու մշակույթը, նրա խոհերն ու երազները, տեսնում է իրեն, իր ընտանիքը, իր հայրենիքը... Մայրենի լեզվի վերաբերյալ գիտելիքներն, զգացումները ավելի ամբողջական ու տպավորիչ են դառնում, երբ սովորողը ծանոթանում է օտար հեղինակի (Ա. Բիտով, «Հայաստանի դասերը») բացահայտումներին, ինչն և նպաստում է էլ ավելի սիրելու և արժևորելու մայրենին, լցվելու հպարտությամբ ու պատասխանատվությամբ:

«Երգ ու տաղ» բաժինը լի է ազգային գույներով, ձայներով, ներքին մտորումներով: Գրեթե բոլոր նյութերին կարելի է համակցել այլ առարկաներ՝ երաժշտություն, նկարչություն, գրականություն, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և այլն: Սովորողը ծանոթանալով մեր ազգին բնորոշ այլ իրողություններին՝ կարող է պատրաստել հետազոտական աշխատանքներ համապատասխան թեմաներով, որոնք կարող են պատրաստվել նաև համագործակցային եղանակներով: Վերջինս ավելի հարմար տարբերակ է, քանի որ տեղեկությունները մշակվելով խմբերի միջոցով՝ կլինեն բազմաշերտ ու լավ ուսումնասիրված: Ընգրկված բանաստեղծությունների մեջ առկա է և՛ ազգային մշակույթ, և՛ հայկական բնություն, կենցաղ, պատմություն, կարոտ, սեր, հայրենիք: Կա լավ ու բարի օրերի երազանք, տողատակերում հայ մարդն է , նրա թախիծը, կարոտը, ցավը, նրա խոհերն են իր տխուր ճակատագրի վերաբերյալ, նրա երազներն են պայծառ ապագայի մասին («Արագիլներ»):

Քայլ առ քայլ ճանաչելով, մեկնաբանելով ու վերլուծելով հայրենիքի, ագային կյանքի , մշակութային դրսևորումների մանրամասները և այդ ամենը քննարկելով խմբային աշխատանքներում՝ աշակերտները սովորում են վերաբերմունք դրսևորել ազգային արժեքների նկատմամբ, փորձում են քննադատել ինչ-որ երևույթներ, լինել պատմության մի մասնիկը, կերտել պատմություն: Այդ բոլոր քննարկումներից, վերլուծություններից ձևավորվում է մի կայուն, ազգային արժեհամակարգ, և ծնունդ է առնում հետևյալ գիտակցությունը, որ ինքն այս ամենը ժառանգելով պապերից , պարտավորվում է պահպանել, զարգացնել և փոխանցել սերունդներին: Ինքնաճանաչումն, ինքնաարժևորումը, ժամանակի մեջ ազգային նկարագիրը չկորցնելը դառնում է կենսակերպ, կյանքի հրամայական:

Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ այն մեծ է, այլ նրա համար, այն քոնն է:

Սենեկա Կրտսեր

ԳԼՈՒԽ 2

Ամփոփիչ խաղ- վարժություններ

Յուրաքանչյուր հեքիաթի ամփոփման փուլում վերհիշելով անհրաժեշտ համադրումներն ու գնահատումները՝ կազմվում են համագործակցային քննարկմամբ իրականացվող ամփոփիչ հարցեր՝ հեքիաթների ուսուցման

ընթացքում ձևավորված եզրահանգումներն ու դիրքորոշումները հստակեցնելու, ամրապնդելու նպատակով: Համագործակցային աշխատանքների դրսևորման լավագույն ձևը խմբային առաջադրանքներն են, որոնք կարող են ունենալ ստեղծագործական, վերլուծական, բնութագրական, քննադատական կամ գնահատողական բնույթ: Նման աշխատանքներ կազմակերպելու համար դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբին հանձնարարել մեկ կամ երկու առաջադրանք: Առաջադրանքի շուրջ խմբի անդամները կարող են պատրաստվել և՛ անհատապես, և՛ ընդհանուր խմբով: Կարևոր պայման է խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը, իրար լսելու, միմյանց կարծիքը հարգելու և համատեղ որոշումներ կայացնելու գիտակցությունը, այսինքն՝ խումբը պատասխանատու է յուրաքանչյուր անդամի, ցանկացած անդամ՝ ամբողջ խմբի հաջողության համար:

Ենթադրվող հարցերի օրինակներ

«Ուրիշի համար փոս փորողն ինքը կընկնի մեջը»

1.Դեպքերի զարգացմամբ հայկական ո՞ր հեքիաթի հետ որոշակի նմանություններ ունի այս հեքիաթը:

2.Ինչո՞ւ փոքր եղբայրը հենց տներ կառուցեց:

3.Ձեր կարծիքով՝ ի՞նչ նոր դավ կնութեր մեծ եղբայրը, եթե փոքրը չպատմեր՝ ինչպես է հարստացել:

4.Դեպքերի ընթացքն այնպես փոխեք, որ մեծ եղբայրը օգնություն խնդրի փոքր եղբորից և զղջա իր արարքների համար:

«Հարուստն ու մուրացկանը»

1.Գնահատե՛ք թագավորի վերաբերմունքն իր թագավորությունում ապրող մարդկանց նկատմամբ:

2.Ի՞նչ եք կարծում՝ մուրացկանի համար հարմարավե՞տ էր այդպես ապրելը, իսկ թագավորի՞՝ այդպիսի հպատակ ունենալը:

3.Ձեր կարծիքով՝ ո՞ր դեպքում միայն մուրացկանը կհրաժարվեր իր այդ «աշխատանքից»:

4.Ի՞նչ պատիժ կառաջարկեիք մուրացկանի համար (գուցե պարտադիր աշխատանք, որ սովորեր իր քրտինքով վաստակած հացը ուտել):

«Արդուկն ու մարդուկը»

Այս հեքիաթում շատ են և՛ հույզերը, և ՛զգացմունքները, և՛ ձայները, և՛ գույները, ուստի այն պետք է վերլուծել և արժևորել տարբեր տեսանկյուններից: Դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի՝ յուրաքանչյուր խմբին տալով իր առաջադրանքը:

Այսպես.

1. ներկայացնել՝ ինչ ձայներ լսեցին , ի՛նչ հույզեր ապրեցին, ի՛նչ պատկերներ տպավորեցին, ի՛նչ իմացան:
2. գրանցել բոլոր բարի ու չար երևույթները, մեղադրել կամ արդարացնել Մարդուկին
3. քննադատել վախկոտ հասարակությանը , բերել համանման օրնակներ հայկական հեքիաթներից:
4. պատկերացնել բոլոր այն լավ բաները, որոնք կարելի էր ստեղծել արդուկի միջոցով:

«Այգեպան Մոսին»

Առաջադրվում են հարցեր՝ տարբերակված մոտեցմամբ

1-ին մակարդակ - պարունակում է նկարագրական, կարևոր փաստերի վերանայման, բանալի բառերի (մտքեր, նախադասություններ) առանձնացման, տեղեկատվական նպատակով ընդգրկված հարցեր՝ ի՞նչ զորություն ուներ Մոսին, ի՞նչ առաջարկեց և ի՞նչ խոստացավ թագավորը, պահպանե՞ց իր խոստումը, ի՞նչ ընտրեց այգեպան Մոսին, ի՞նչ արեց ժողովուրդը թագավորի որոշումից հետո և այլն:

2-րդ մակարդակում արդեն իրականացվում են վերլուծություններ, մեկնաբանվում են առանձին հատվածներ, գործողություններ, բնութագրվում են հերոսները:

ա) Համեմատել հեքիաթի երկու հերոսների մարդկային որակները:

բ) Ի՞նչ է խորհրդանշում բահը:

գ) Ո՞րն էր թագավորի՝ իր հպատակի նկատմամբ ատելությամբ լցվելու պատճառը, ինչպիսին պետք է լինի երկրի ղեկավարը:

դ) Ի՞նչ են խորհրդանշում «այգեպան Մոսի - կաղնի», « բահերի անտառ» տեսիլքները

3-րդ մակարդակում ընդհանուր վերլուծությունների, մեկնաբանությունների հիման վրա սովորողները համադրում, գնահատում են հերոսների արարքները, քննադատում բոլոր մերժելի դրսևորումները, արժևորում բարին ազնիվը, գեղեցիկը, ժողովրդականը: Այս մակարդակում սովորողները

ազատորեն արտահայտում են կարծիքներ, դրսևորում հստակ դիրքորոշում, վերաբերմունք:

ա) Ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս պետք է թագավորը կառավարի իր երկիրը, որպեսզի մարդիկ իրենց լավ զգան (կարևորել թագավորի՝ իբրև մարդու վարքագիծը):

բ) Շարունակիր՝ եթե ժողովուրդը բռունցք չդառնար…: Միավորվելու, մեկ ընդհանուր գաղափարախոսությամբ առաջնորդվելու ի՞նչ օրինակներ գիտես հայոց (կամ օտար) պատմությունից :

գ) Եթե դու լինեիր այգեպան Մոսիի փոխարեն, ի՞նչ հնարամտություն կբանեցնեիր սաստելու նպատակով:

դ) Պատկերացրու՝ թագավոր ես. ի՞նչ կանեիր երկիրդ շեն ու հզոր դարձնելու համար:

«Խոսող ձուկը»

Քննադատական մտքի զարգացման համար անհրաժեշտ է երբեմն իրադարձությունները պտտեցնել սեփական անձի շուրջն ու սեփական մաշկի վրա զգալ դրա հետևանքները՝ նպաստելով քննադատության՝ ավելի իրատեսական, ազնիվ ու արդարացի լինելուն:

Այս նպատակով՝ սովորողներին առաջարկել հեքիաթում առկա հերոսների փոխարեն իրենց դարձնել հերոսներ և գործել մտքի թելադրանքով: Իրենք հանդես գալով նույն իրավիճակներում՝ ավելի հեշտ են պատկերացնում իրադարձությունների՝ կյանքին սպառնացող վտանգների լրջությունը, տեսանելիորեն գիտակցում են իրենց քայլերը, հստակորեն արտահայտում են իրենց դիրքորոշումներն ու արժևորումները:

Թեմայի ամփոփման համար նախատեսված վարժություններ

Վարժություն 1. Խթանում է ստեղծագործական մտածողությունը, ձևավորում ինքնաճանաչողության, ինքնարժևորվելու կարողություն, օգնում գիտակցել, որ սեփական գործունեությունը ևս կարևոր է լավ ապագա կերտելու համար:

Աշակերտներին տրվում է A3 կամ A4 ֆորմատի սպիտակ թուղթ, հանձնարարվում է ձախ անկյան ամենավերին մասում նշել մի կետ և գրել կարդացած առաջին հեքիաթի վերնագիրը, իսկ թղթի ամենավերջին մասում նույպես նշել մի կետ՝ գրելով կարդացած վերջին հեքիաթի վերնագիրը:

Այնուհետև ուսուցիչն առաջարկում է հիշել առաջին հեքիաթից մինչև վերջին հեքիաթն ընկած այլ հեքիաթներից ստացած տպավորությունները, ձեռք բերված դասերը, դուր եկած հերոսներին, նրանց նկատմամբ ունեցած լավ կամ վատ հիշողությունները: Ուսուցիչը հիշեցնում է, որ բոլոր դրական հիշողությունների, զգացումների դեպքում գիծը բարձրանում է, իսկ վատի դեպքում՝ իջնում: Ստացվում է մի հետաքրքիր «ճանապարհ», որը յուրաքանչյուր սովորողի համար խիստ անհատական ու բնութագրական կարող է լինել: Վարժության ավարտին անցկացվում է դասարանական քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

1.Հեքիաթներում ներկայացվող հերոսների նման մարդիկ կամ իրադարձություններ երբևէ հանդիպե՞լ են ձեզ:

2.Կերպարների ու նրանց գործողությունների և ձեր ու ձեր մտքերի միջև ի՞նչ նմանություններ կային:

3. Ո՞ր հերոսի ո՞ր գործողություններն են ձեզ զարմացրել, զայրացրել կամ հիացրել:

4. Անձամբ ձեզ ի՞նչ է հարկավոր երջանիկ լինելու համար:

Վարժություն 2. «Հաջողության սանդուղք» - խթանում է ինքնավստահությունը, երևակայությունը, նպաստում է համագործակցությանն ու արժեքների հստակեցմանը:

Դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ 5-ական աղյուս-թերթիկ, որի վրա խմբի անդամները ուսուցչի հանձնարարությամբ կգրեն այն հատկանիշները, որոնք իրենց կարծիքով կարևոր են հաջողության հասնելու ճանապարհին: Ուսուցիչը գրատախտակին փակցնում է A1 ֆորմատի թուղթ: Խմբերը այդ թղթի շուրջը փակցնում են իրենց թերթիկները այնպես, որ ստացվի սանդուղք: Ավարտին դասարանական քննարկմամբ սովորողները ծանոթանում են միմյանց կարծիքներին, փոխանակվում են մտքեր, կատարվում են վերջնական եզրահանգումներ

«Մեր լեզուն»

Վարժություն 1. «Ի՞նչ գիտենք մեր երկրի մասին»:Աշխատանքն համակցել «Հայրենագիտության» առարկայի հետ :

Դասարանը բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ Հայաստանի մասին 4-ական քարտ նկարներով, որտեղ պատկերված են հայտնի

իրադարձություններ: Խմբերը պատրաստում են փոքրիկ շարադրանքներ տվյալ հարցերի շուրջ: Ավարտին իրականացվում է դասարանական քննարկում:

Վարժություն 2.. «Մենք ենք, մեր հայերը»

Ուսուցիչը աշակերտներին 1-ական քարտ է տալիս, որի վրա պատկերված է ճանաչված որևէ հայ: Ամեն նկարի համար նախօրոք պատրաստված է համապատասխան նկարագրություն: Յուրաքանչյուր աշակերտ գտնում էիր զույգին (քարտ-նկարագրություն), և միասին ներկայացնում են իրենց բաժին ընկած անձին:

Վարժության նպատակը ազգային արժեքները բացահայտելն ու գնահատելն է , ազգային նվաճումներն արժևորելը, հայրենասիրությամբ լցվելն ու ինքնարժևորվելը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, այս աշխատության մեջ ընդգրկված օրինակների նպատակային վերլուծությունների ամփոփմամբ փաստվում է, որ ցանկացած առողջ քննադատություն հետագա արժեքի կարևոր պայման է : Մանավանդ այն դեպքում, երբ քննադատությունը լինում է հիմնավորված, պատճառաբանված, ուսումնասիրված տարբեր տեսանկյուններով:

Վերլուծական - քննադատական կարողություններով օժտված աշակերտը ի զորու է ճիշտ գնահատելու կյանքը, արժևորելու կարևորը, բարին ու գեղեցիկը:

Մարդուն չեք կարող նոր բան սովորեցնել, կարող եք օգնել, որ նա այդ բանը գտնի իր մեջ:

Գալիլեյ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Համագործակցային ուսուցում:** Ձեռնարկ/Ա. Հովհաննիսյան, Կ.Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշ.- Երևան, «Անտարես», 2006

2. **Կյանքի հմտություններ:** Ուսուցչի ձեռնարկ/Լ. Ալեքսանյան, Ն. Բայաթյան,Ս. Գյումիշյան և ուրիշներ: Կրթական բարեփոխման կենտրոն - Երևան, 2001

3.**Մայրենի 5**: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք / Դավիթ Գյուրջինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան-Երևան, 2022